ԹԻՎ 34 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

21 մարտի 2023թ.
ք. Գորիս

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 12-Ա
ՔԱՂԱՔԱՑՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Վ. ԲԱԼՅԱՆԻ 17.03.2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Քաղաքացու որոշում կուսակցության լիազոր ներկայացուցիչ Վ. Բալյանի 17.03.2023թ. դիմումը՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

Թից 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով 2023 թվականի մարտի 17-ին ներկայացվել է Քաղաքացու որոշում կուսակցության լիազոր ներկայացուցիչ Վ. Բալյանի 17.03.2023թ. դիմումը, որում նշվում է.

«2023 թվականի մարտի 10-ին Սիսիանի ՏԻՄ համամասնական ընտրություններին մասնակցող Քաղաքացիական պայամնագիր կուսակցության նախընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանի ֆեյսբուքյան էջում տեղադրվել է Civic.am լրատվական կայքի պաշտոնական լուսագրով ակնհայտ խտրական և կողմնակալ քարոզչական բնույթի տեսանյութ՝ Եկենք լինենք միասնական, հավատանք ինքներս մեզ, դառնանք «մենք» և ամեն ինչ լավ է լինելու վերնագրով, ի խախտումն ՀՀ Ընտրական օրենսգրքի 20.1 հոդվածի 1-ին և 3 կետերի:

Թիվ 34 ԸԸՀ մարտի 15-ի 10-Ա Քաղաքացու որոշում կուսակցության լիազոր ներկայացուցիչ Մ. Ազոյանի 12.03.2023 թ-ի դիմումի մասին որոշման մեջ նշել է, որ դիմում ներկայացված հանգամանքների ուսումնասիրությամբ թիվ 34 ԸԸՀ արձանագրել է, որ դիմումատուն վկայակոչել է թեկնածուի անձնական էջը, որում քարոզչական նյութ է տեղադրված, սակայն Ընտրական օրենսգրքքի 20.1 հոդվածը սահմանում է միայն համացանցում գործող զանգվածային լրատվության միջոցների և համացանցային կայքի իրավատեր հանդիսացող անձանց կողմից նախընտրական քարոզչության ժամանահատվածում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ ապահովելու պահանջը, ինչպես նաև համացանցում, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցներով նախընտրական քարոզչությանը վերաբերող վճարովի հիմունքներով գովազդային նյութեր և տեսանյութեր տեղադրելու պայմանները: Նշվում է, որ դիմումատուի կողմից չեն ներկայացվել ապացույցներն առ այն, որ Արմեն Հակոբջանյանի կողմից իր ֆեյսբուքյան անձնական էջը հանդիսանում է համացանցում գործող զանգվածային լրատվության միջոց կամ նա հանդիսանում է

համացանցային կայքի իրավատեր հանդիսացող անձ, ինչպես նաև չեն ներկայացվել ապացույցներ առ այն, որ թեկնածու Արմեն Հակոբջանյանի կողմից իր ֆեյսբուքյան էջում տեղադրված նյութերը հանդիսանում են վճարովի հիմունքներով գովազդային նյութեր և տեսանյութեր: Ընտրական օրենսգրքի 20.1 հոդվածով սահմանված կանոնակարգումները չեն տարածվում թեկնածուի կողմից համացանցում գործող սոցիալական ցանցի իր անձնական էջում անվճար հիմունքներով նյութեր, այդ թվում՝ քարոզչական բնույթի տեղադրելուն:

2023 թվականի մարտի 10-ին Սիսիանի ՏԻՄ համամասնական ընտրություններին մասնակցող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանի ֆեյսբուքյան էջում Civic.am լրատվական կայքի պաշտոնական լուսագրով ակնհայտ խտրական և կողմնակալ քարոզչական բնույթի տեսանյութը Եկենք լինենք միասնական, հավատանք ինքներս մեզ, դառնանք «մենք», և ամեն ինչ լավ էլինելու. Սիսիանում մեկնարկել է ՔՊ նախընտրական քարոզարշավը վերնագրով, առկա է Civic.am պաշտոնական կայքում՝ 10.03.2023 թվականի թվագրումով՝ https://civic.am/politics/58164-sisianum-meknarkel-e-naxyntrakan-qarozarshavy.html?fbclid=IwAR3wbb56n4O9KsZjPaqHsKmN5JFoy2blJkd75oRtXZMb6iGS2aHpO9qG0 հղումով: Ընտրական օրենսգրքի 20.1 հոդվածը սահմանում է համացանցում գործող զանգվածային լրատվության միջոցների և համացանցային կայքի իրավատեր հանդիսացող անձանց կողմից նախընտարական քարոզչության ժամանահատվածում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցություններ-ի/կուսակցությունների դաշինքների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ ապահովելու պահանջը, ինչպես նաև համացանցում, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցներով նախընտրական քարոզչությանը վերաբերող վճարովի հիմունքներով գովազդային նյութեր և տեսանյութեր տեղադրելու պայմանները: Civic.am կայքը նույնականացվող և համացանցում գործող զանգվածային լրատվամիջոց է և Ընտրական օրենսգրքի 20.1 հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն որպես համացանցում գործող զանգվածային լրատվության միջոց նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների համար պարտավոր է ապահովել խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

16.03.2023 թվականին Civic.am պաշտոնական կայքում տեղադրվել է ակնհայտ կողմնակալ և խտրական քարոզչական բնույթի նոր տեսանյութ՝ Միասնաբար պետք է լուծենք մեր համայքի առջև ծառացած բոլոր խնդիրները. Սիսիանում քարոզարշավն ակտիվ փուլում է վերնագրով՝ https://civic.am/politics/58600-sisianum-qarozarshavn-aktiv-pulum-e.html?fbclid=IwAR3ri5n8QARLp2N eDfdckHwAJcAGsgSAMqY1Za06ufhJ9vwYn2UURy1Do հղումով:

Մարտի 10-ին զանգվածային լրատվամիջոցի կայքում հրապարակված Civic.am պաշտոնական կայքում և մարտի 26-ին կայանալիք Սիսիան համայնքի ՏԻՄ

համամասնական ընտրությունների մասնակից Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանի ֆեյսբուքյան անձնական էջով տարածված Եկենք լինենք միասնական, հավատանք ինքներս մեզ, դառանանք «մենք», և ամեն ինչ լավ է լինելու. Սիսիանում մեկնարկել է ՔՊ նախընտրական քարոզարշավը վերնագրով տեսանյութի դիտումների քանակը 16-ի դրությամբ 36 հազարից ավել է:

Գտնում ենք, որ համացանցում գործող զանգվածային լրատվամիջոց հանդիսացող Civic.am կայքի կողմից ՀՀ Ընտրական օրենսգրքի 20.1 հոդվածի խախտումներն ակնհայտ են, ունեն շարունակական բնույթ, կարող են էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, թույլ տրված խախտումների հետևանքները հնարավոր չէ վերացնել:

Համացանցում գործող զանգվածային լրատվամիջոց հանդիսացող Civic.am պաշտոնական կայքում հրապարակված Միասնաբար պետք է լուծենք մեր համայքի առջև ծառացած բոլոր խնդիրները. Սիսիանում քարոզարշավն ակտիվ փուլում է վերնագրով, https://civic.am/politics/58600-sisianum-qarozarshavn-aktiv-pulum-e.html?fbclid=IwAR3ri5n8QARLp2N eDfdckHwAJcAGsgSAMqY1Za06ufhJ9vwYn2 UURy1Do հղումով տեղադրված տեսանյութով ապացուցվում է նաև, որ 26.03.2023 թ-ի Սիսիան համայքի ՏԻՄ համամասնական ընտրությունների մասնակից Քաղաքացիական պայմանագիր կուսակցության առաջին համար Արմեն Հակոբջանյանը առնվազն ժամանակ առ ժամանակ հանդես է գալիս որպես Սիսիան համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար նախընտրական քարոզչություն կատարելիս ի խախտումն ՀՀ Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի:

Թիվ 34 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 15.03.2023 թ-ի 10-Ա որոշման մեջ նշել է, որ վարչական վարույթի շրջանակներում Սիսիանի համայնքապետարանից պահանջել է տեղեկություններ առ այն, թե ով է հանդիսանում Սիսիան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Սիսիան քաղաքի Շիրակ, Խանջյան, Մինասյան և Բռնակոթ բնակավայրի Վահան Խորենի փողոցներում Էլեկտրական հոսանքի հենասյուների վրա տեղադրված արտաքին գովազդային վահանակների տնօրինողը, սակայն մինչև վարույթի մեկնարկը Սիսիանի համայնքապետարանից պատասխան չի ստացել, ինչից ելնելով թիվ 34 ԸԸՀ-ն եզրակացրել է, որ Սիսիանի համայնքապետարանում պահանջվող տեղեկություններն առկա չեն: Հաշվի առնելով հանգամանքը, որ 26.03.2023 թ-ին կայանալիք Սիսիան համայնքի ՏԻՄ համամասնական ընտրություններն մասնակից Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակում որպես թեկնածուներ ընդգրկված են Սիսիան համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանը, Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալ Կարեն Հովհաննիսյանը, Սիսիան համայնքի ղեկավարի տեղակալ և նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Սիսիանի համայնքի ղեկավարի պարտականությունները

կատարող Գարիկ Հակոբյանը իրենց պաշտոնական լիազորություններն իրականացնելիս մինչև նախընտրական քարոզչության ժամանակահատվածի մեկնարկը և ընթացքում իրավասու էին ընդունել Սիսիան համայքի վերոնշյալ հասցեներում արտաքին գովազդային վահանակների տեղադրման թույլտվություն տալու մասին որոշումներ ի օգուտ ընտրությունների մասնակից կուսակցություններից մեկի նախընտրական քարոզչության ժամանակահատվածում խտրական և կողմնակալ պայմաններ ստեղծելու միջոցով արհեստական առավելություն ապահովելու նպատակով ի խախտումն նախընտրական քարոզչության մասնակից թեկնածուների, կուսակցությունների/կուսակցությունների դաշնակիցների հավասար պայմաններ ապահովելու պահանջի, գտնում ենք, որ Սիսիանի համայնքապետարանի կողմից պահանջվող տեղեկատվություն չտրամադրելու պատճառ կարող է հանդիսանալ թեկնածու հանդիսացող անձանց կողմից պաշտոնական դիրքի ենթադրյալ չարաշահումը: Թիվ 34 ԸԸՀ-ն Սիսիանի համայնքապետարանի կողմից պահանջվող տեղեկություններ չտրամադրելը մինչև վարչական վարույթով հրավիրված նիստի ավարտը և 15.03.2023 թվականի թիվ 34 ԸԸՀ-ի 10-Ա որոշման ընդունումը կարող է դիտարկվել որպես ՀՀ Ընտրական օրենսգրքով խստիվ արգելվող պաշտոնական դիրքի չարաշահման առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող արարքի համար օրենքով սահմանված պատասխանատվությունից խուսափելու միտված դիտավորյալ գործողություն: Առնվազն մինչև սույն դիմումի ներկայացումը դիմումատու կողմ հանդիսացող Քաղաքացու որոշում կուսակցությունը չի տիրապետում տեղեկատվության առ այն, թե արդյոք Սիսիանի համայնքապետարանի կողմից թիվ 34 ԸԸՀ–ին ներկայացվել են պահանջվող տեղեկությունները, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու նպատակով թիվ 34 ԸԸՀ-ը ինչպիսի միջոցառումներ է ձեռնարկել, թիվ 34 ԸԸՀ ՀՀ իրավապահ մարմիններին ներկայացրել է արդյոք հաղորդում թիվ 34 ԸԸՀ-ի 15.03.2023 թվականի 10-Ա որոշումով հաստատված ՀՀ Ընտրական օրենսգրքի 20.1 հոդվածով սահմանված խախտումները կատարած անձանց և առերևույթ հանցագործության հատկանիշներով արարք կատարելու մեջ կասկածվող պաշտոնատար անձանց հայտնաբերելու համար:

Թիվ 34 ԸԸՀ-ին տեղեկացնում ենք, որ Սիսիան համայնքի վերոնշյալ բոլոր հասցեներում համայնքային սեփականության գույք հանդիսացող էլեկտրական հոսանքի հենասյուների վրա 2022 թվականի սեպտեմբերի 26-ի Սիսիան համայքի ՏԻՄ համամասնական ընտրությունների ընթացքում նախընտրական քարոզչության նախորդող ժամանակաշրջանում տեղադրվել են Քաղաքացիական պայմանագիր կուսակցության գովազդային վահանակները, որի փաստն ապացուցող լուսանկարներն կցվում են:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում տեղադրված են Տեղեկատվություն քարոզչական պաստառներ փակցնելու 10 հազար և ավել ընտրողներ ունեցող համայնքներում անվճար տեղեր հատկացնելու վերաբերյալ:

Ընտրական հանձնաժողովին տեղեկացնում ենք, որ սույն որոշման ընդունման համար լիազոր մարմինը կայացված որոշման մեջ ներառել է բազմաթիվ հասցեներ, որտեղ նախընտրական քարոզչական պաստառներ փակցնելը կամ անհնար է հասցեի բացակայության հիմքով կամ տեխնիկական անհնարինությամբ պայմանավորված կամ խախտում է ՀՀ Ընտրական օրենսգրքով նախընտրական քարոզչական պաստառներ փակցնելու պայմաններին ներկայացվող պահանջները: Դեռևս մինչև 2023 թվականի մարտի 12 Քաղաքացու որոշում կուսակցության լիազոր ներկայացուցիչ Մ. Ազոյանի դիմումի ներկայացումը Քաղաքացու որոշում կուսակցության նախընտրական շտաբը բանավոր տեղեկացրել է թիվ 34 ԸԸՀ նախագահ Ա. Ստեփանյանին նշված խախտումների մասին: Դիմումատու Միեր Ազոյանի դիմումի հիմքով նախաձեռնված վարչական վարույթի շրջանակներում Սիսիան համայնք կատարած շրջայցի ընթացքում թիվ 34 ԸԸՀ-ը ներկայացված բանավոր բողոքի մասին տեղյակ է պահել որոշման ընդունման համար իրավասու լիազոր մարմնին, մի քանի հասցեներում արձանագրել է անվճար պաստառներ փակցնելու համար հատկացված տեղերում վերոնշյալ քարոզչական պաստառներ փակցնելու անհնարինության կամ ընտրության մասնակից կուսաակցությաունների կողմից օրենքով սահմանված պահանջների կատարման անհնարինության մասին: Թիվ 34 ԸԸՀ-ին արդեն գրավոր տեղեկացնում ենք, որ վերոնկարագրյալ խնդիրն առկա է Սիսիան համայքի բնավայրերում տեղակայված ընտրատեղամասերի առնվազն 1/3-ում, մասնավորապես, Աղիտուում, Սպանդարյանում, Ույծում, Սալվարդում, Հացավանում, Արևիսում, Թասիկում, Անգեղակոթում,Բալաքում, Շաղատում, և այլն: Թիվ 34 ԸԸՀ-ին տեղեկացնում ենք, որ առնվազն մինչև սույն դիմումի ներկայացման պահը Տեղեկատվություն քարոզչական պաստառներ փակցնելու 10 հազար և ավել ընտրողներ ունեցող համայնքներում անվճար տեղեր հատկացնելու վերաբերյալ որոշման մեջ առկա սխալներով պայմանավորված թերություններն ու խախտումները վերացված չեն կամ վերացված են մասամբ, առաջացրել են խախտումներ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, իսկ հաշվի առնելով հանգամանքը, որ նախընտրական քարոզչության համար սահմանված 24 օրյա ժամկետից անցել է 16 օր, այսինքն՝ 2/3-ը, խախտումների հետևանքները անհնար է վերացնել:

Թիվ 34 ԸԸՀ 15.03.2023 թ-ի 10-Ա որոշման մեջ արձանագրվել է, որ Սիսիան համայնքի վերանշյալ հասցեներում համայնքային սեփականության գույք հանդիսացող էլեկտրական հոսանքի հենասյուներին տեղադրված արտաքին գովազդային վահակակների վրա 26.03.2023թ-ի Սիսիան համայնքի ՏԻՄ համամասնական ընտրությունների մասնակից Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանի լուսանկարով նախընտրական պաստառները փակցվել են ՀՀ Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտումով և գովազդային վահանակների տնօրինողի անհայտ լինելու պայմաններում անհնարին է դարձնում ընտրությունների մասնակից

կուսակցությունների համար նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմանների ապահովումը, ու ենթակա են հանման:

Թիվ 34 ԸԸՀ 15.03.2023 թ-ի 10-Ա որոշումը օրինական ուժի մեջ է մտել հրապարակման պահից և ներկայացվել է Սիսիան համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարին ի կատարման, սակայն առ 17.03.2023 թվականը մինչև սույն դիմումի ներկայացման պահը, այսինքն՝ նախընտրական քարոզարշավի համար ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված 24-օրյա ժամկետի 2/3-ից ավել ժամանակահատվածում, օրենքի խախտումով տեղադրված քարոզչական պաստառները հանված չեն: Որպես ապացույց նշենք, որ 26.03.2023 թվականին կայանալիք Սիսիանի ՏԻՄ համամասնական ընտրություններին մասնակից ՀՀԿ և ՔՊԿ կուսակցությունները դիմումի ներկայացման պահին վճարովի հիմունքներով ունեն 5 քմ մակերեսը գերազանցող մեկական պաստառ Սիսիան քաղաքի Նժդեհ փողոցում, Քաղաքացու որոշում կուսակցությունը չունի, մինչև 5 քմ մակերեսով վճարովի հիմունքներով տեղադրման ենթակա քարոզչական պաստառներ ունի Քաղաքացու որոշում կուսակցությունը՝ հայտնի տնօրինողի հետ 01.03-27.03.2023թ. ժամկետով կնքված անհատույց օգտագործման պայմանագրով՝ 8 հատ, 4 հասցեներում, Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը՝ առայժմ անհայտ տնօրինողի կողմից տեղադրված արտաքին գովազդային վահանակների վրա՝ 30 հատ՝ երկկողմանի փակցված 60 հատ, իսկ Հայաստանի հանրապետական կուսակցությունը՝ չունի: Այսպիսով, ՀՀ Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտումով արտաքին գովազդային վահանակների վրա փակցված քարոզչական պաստառների միջոցով 26.03.2023 Սիսիան համայնքի ՏԻՄ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակից Քաղաքացիակնան պայմանագիր կուսակցությունը Քաղաքացու որոշում կուսակցության նկատմամբ ունի ընտրողների վրա քարոզչական-վիզուալ ազդեցության արհեստական ձևավորված առավելություն ավելի քան 6 անգամ, իսկ Հայաստանի հանրապետական կուսակցության նկատմամբ՝ առնվազն 25 անգամ: Այսպիսով, թիվ 34 ԸԸՀ 15.03.2023 թվականի 10-Ա որոշմամբ որպես ՀՀ Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտումը առաջացրել է ընտրությունների արդյունքի վրա ազդող էական հետևանքներ, որոնք հնարավոր չէ վերացնել:

Թիվ 34 ԸԸՀ-ը 15.03.2023 թ-ի 10-Ա որոշման մեջ արձանագրել է, որ գովազդային վահանակների տնօրինողը մինչև է որոշման ընդունումը մնում է անհայտ: Դիմումատու Քաղաքացու որոշում կուսակցությունը առնվազն մինչև սույն դիմումի ներկայացման պահը չի ծանուցվել և չի տիրապետում ՀՀ Ընտրական օրենսգրքի խախտմամբ քարոզչական պաստառներ փակցնողի և արտաքին գովազդի վահանակները տնօրինողի անձին հայտնաբերելու ուղղությամբ ՀՀ իրավապահ մարմիններն թիվ 34 ԸԸՀ-ի, Սիսիանի համայնքապետարանի կամ խախտման շահառու կողմ հանդիսացող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության կողմից ՀՀ իրավապահ մարմիններին

ներկայացված հաղորդման մասին՝ չնայած արձանագրված արարքը պարունակում է առերևույթ հանցագործության հատկանիշներ:

Թիվ 34 ԸԸՀ-ին ենք ներկայացնում ընտրական հանձնաժողովի 15.03.2023 թ-ի 10-Ա որոշմամբ արձանագրված ՀՀ Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտումով Սիսիան համայնքի վերոնշյալ հասցեներում տեղադրված արտաքին գովազդային վահանակների հայտնաբերելու համար տեղեկություններ՝ տեսանյութ և լուսանկար, որտեղ հստակ երևում և նույնականացվում է պաստառները փակցնելու համար օգտագործված տրանսպորտային միջոցը, ինչպես նաև տրանսպորտային միջոցի պետհամարանիշը:

Թիվ 34 ԸԸՀ-ը 15.03.2023 թ-ի որոշման մեջ նշվում է, որ 26.03.2023թ-ի Սիսիանի ՏԻՄ համամասնական ընտրություններին մասնակից Քաղաքացիական պայմանագիր կուսակցության լիազոր ներկայացուցիչ Կարեն Համբարձումյանը նշել է, որ Սիսիան համայնքի վերոնշյալ հասցեներում օրենքի խախտումով տեղադրված արտաքին գովազդային վահանակների տնօրինողի մասին տեղեկություններ չի կնքել և դրանց վրա քարոզչական պաստառներ փակցնելու վերաբերյալ որևէ պայմանագիր չի կնքել;

Թիվ 34 ԸԸՀ-ին տեղեկացնում ենք, որ Սիսիան համայնքի վերոնշյալ հասցեներում ընտրական հանձնաժողովի 13.03.2023 թ-ի 10-Ա որոշմամբ արձանագրված ՀՀ Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտումով տեղադրված գովազդային վահանակների վրա փակցված քարոզչկան պաստառները՝ ընդհանուր 60 հատ, տպագրվել են Ալբեդո Գրաֆիկ ՍՊԸ-ի կողմից, Քաղաքացիական պայմանագիր կուսակցության պատվերով և հանձնվել են պատվիրատուին: Քարոզչական պաստառները գողանալու մասին տեղեկատվություն պարունակող որևէ հաղորդում առնվազն մինչև 17.03.2023 թվականը ՀՀ որևէ իրավապահ մարմին չի ներկայացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, ի գիտություն ընդունելով Քաղաքացիական պայմանագիր կուսակցության լիազոր ներկայացուցիչ Կարեն Համբաձումյանի պատասխանը, որ պաստառները փակցնելու մասին կնքված պայմանագիր առկա չէ, փաստը, որ քարոզչական պաստառների տպագրությունն իրականացրած ընկերությունը, քանակը և պատվիրատուն հայտնի են քարոզչական պաստառների գողացվելու մասին տեղեկատվություն չկա, ՀՀ իրավապահ որևէ մարմնի նման հաղորդում առ 17.03.2023 թ-ը չի ներկայացվել, որ Քաղաքացու որոշում կուսակցության կողմից ընտրական հանձնաժողովին սույն դիմումին կից տրամադրվող ապացույցները բավարար են քարոզչական պաստառները փակցնողի անձը նույնականացնելու և հայտնաբերելու, արտաքին գովազդային վահանակները տնօրինողի անձը նույնականացնելու համար, 26.03.2023 թվականի Սիսիանի ՏԻՄ համամասնական ընտրություններին մասնակից կուսակցություններից մեկի, մասնավորապես, Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված դիմումում նշված առնվազն երեք թեկնածուների կողմից պաշտոնական

լիազորությունների և ծառայողական պարտականությունների հանգամանքներով նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Քաղաքացիական պայմանագիր կուսակցության համար շահեկան, իսկ մրցակից կուսակցությունների համար ոչ հավասար, խտրական և կողմնակալ պայմաններ ձևավորելու փաստը, խնդրում ենք ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, այդ թվում՝ ՀՀ իրավապահ մարմինների աջակցությամբ, թիվ 34 ԸԸՀ 15.03.2023 թվականի 10-Ա որոշմամբ արձանագրված ՀՀ Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների խախտումով անհայտ տնօրինողի արտաքին գովազդային վահանակների վրա դեռևս չպարզված անձի կամ կազմակերպության կողմից Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Արմեն Հակոբջանյանի լուսանկարով քարոզչական պաստառները փակցնելու միջոցով ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության կանոնների խախտման հանգամանքները:

ՀՀ Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն. եթե առկա է նախընտրական քարոզչության սահմանված կարգի այնպիսի խախտում, որը կրում է շարունակական բնույթ, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, կամ թույլ տրված խախտման հետևանքները հնարավոր չէ վերացնել, և թույլ տրված խախտումը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա, ապա թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակը գրանցած ընտրական հանձնաժողովը դիմում է դատարան՝ թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար: դատարանը թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցկի գրանցումն ուժը կորցրած կարող է ճանաչել, եթե հանգում է այն եզրակացության, որ խախտումը կատարվել կամ ուղղորդվել է թեկնածուի կամ ընտրություններին մասնակցող կուսակցության կողմից:»:

2. Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

Նախընտրական քարոզչության իրավական կարգավորումը սահմանված է «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 19-23-րդ հոդվածներով: Դիմումում արծարծվում են հանգամանքներ, որոնք վերաբերում են նախընտրական քարոզչության իրականացմանը համացանցում և նախընտրական քարոզչության նպատակով քարոզչական պաստառների օգտագործման կարգին:

Նախընտրական քարոզչությունը համացանցում կարգավորվում է Ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածով, որի համաձայն՝

«1. Համացանցում գործող զանգվածային լրատվության միջոցները, ինչպես նաև համացանցային կայքի իրավատեր հանդիսացող անձինք նախընտրական

քարոզչության ժամանակահատվածում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:

2. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում համացանցում, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով, նախընտրական քարոզչությանը վերաբերող՝ վճարովի հիմունքներով գովազդային նյութեր և տեսանյութեր կարող են տեղադրվել միայն թեկնածուի, կուսակցության կամ նրա ներկայացուցչի հետ կնքված գրավոր պայմանագրի հիման վրա՝ նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին:

3. Նախընտրական քարոզչական նյութերի հրապարակումը պետք է ուղեկցվի «Նախընտրական քարոզչություն» լուսագրով, իսկ քարոզչական տեսանյութերի դեպքում՝ տեսանյութի վրա տեղադրվող «Նախընտրական քարոզչություն»՝ անընդմեջ ուղեկցվող լուսագրով: Նախընտրական քարոզչական նյութերի և տեսանյութերի հրապարակումը պետք է տեղեկություններ պարունակի պատվիրատուի վերաբերյալ:»:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ դիմումատուն Ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի խախտում է որակում Սյունիքի մարզի Սիսիան համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու 2023 թվականի մարտի 26-ի ընտրությունների մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու Արմեն Հակոբջանյանի կողմից իր ֆեյսբուքյան անձնական էջում «Civic.am» լրատվական կայքի տեսանյութը տեղադրելը:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ինչպես Քաղաքացու որոշում կուսակցության 2023 թվականի մարտի 12-ի դիմումով ներկայացված հանգամանքների ուսումնասիրության արդյունքում 2023 թվականի մարտի 15-ի թիվ 10-Ա որոշմամբ, այնպես էլ 2023 թվականի մարտի 17-ի դիմումով ներկայացրած հանգամանքների ուսումնասիրությամբ արձանագրում է, որ դիմումատուն Ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի խախտում է վկայակոչում թեկնածուի ֆեյսբուքյան անձնական էջում տեղադրված տեսանյութը:

Ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածով սահմանված կանոնակարգումների ապահովման պարտավորությունը դրված է համացանցում գործող զանգվածային լրատվության միջոցների և համացանցային կայքի իրավատեր հանդիսացող անձանց վրա: Մինչդեռ, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու Արմեն Հակոբջանյանը հանդիսանում է «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի օգտատեր, հետևապես վերջինս իր ֆեյսբուքյան անձնական էջում հրապարակումներ կատարելիս կաշկանդված չէ Ընտրական օրենսգրքի 20.1-րդ հոդվածի պահանջներով:

Դիմումում ներկայացված դիրքորոշումն առ այն, որ «Civic.am կայքը նույնականացվող և համացանցում գործող զանգվածային լրատվամիջոց է և Ընտրական օրենսգրքի 20.1 հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն որպես

համացանցում գործող զանգվածային լրատվության միջոց նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուների, ընտրությունների մասնակցող կուսակցությունների/կուսակցությունների դաշինքների համար պարտավոր է ապահովել խտրական և ոչ կողմնակալ պայմաններ», պետք է արձանագրել, որ Civic.am կայքը, որպես կուսակցության կողմից հիմնադրված ՀԼՄ լուսաբանել է ընտրություններին մասնակցող կուսակցության թեկնածուի քարոզարշավը:

Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարչական ռեսուրսները մարդկային, ֆինանսական և նյութական այն միջոցներն են, որոնց ընտրությունների ժամանակ տիրապետում են հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձինք, որը պայմանավորված է հանրային ոլորտում անձնակազմի, ֆինանսների և հատկացումների նկատմամբ նրանց վերահսկողությամբ:

Արգելվում է նախընտրական քարոզչություն կազմակերպելը կամ կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝

1) հանրային ծառայության մեջ գտնվողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողներին իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

2) պետական հիմնարկների կամ կազմակերպությունների, համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

3) դատավորներին, դատախազներին, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, պրոբացիոն ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողներին, զինծառայողներին, քննչական մարմիններում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց (քննչական մարմինների ղեկավարներ և ղեկավարների տեղակալներ, քննիչներ).

4) ընտրական հանձնաժողովների անդամներին.

5) բարեգործական և կրոնական կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին.

6) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին, քաղաքացիություն չունեցող անձանց, բացառությամբ սույն օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված անձանց.

7) Մարդու իրավունքների պաշտպանին.

8) Կենտրոնական բանկի նախագահին և խորհրդի անդամներին.

9) Հաշվեքննիչ պալատի անդամներին.

10) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին.

11) ինքնավար մարմինների անդամներին.

12) Բարձրագույն դատական խորհրդի անդամներին.

13) Հանրապետության նախագահին.

14) դիտորդական առաքելություն իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպություններին և դիտորդներին:

2. Ազգային ժողովի պատգամավորին և անմիջականորեն ընտրողների կողմից ընտրված համայնքների ղեկավարներին և ավագանու անդամներին չի արգելվում քարոզչություն կատարելը կամ քարոզչական նյութ տարածելը՝ բացառելով սույն հոդվածի 1-ին մասում նշված վարչական ռեսուրսների օգտագործումը:

3. Հանրային ծառայության մեջ գտնվող թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուները նախընտրական քարոզչությունն իրականացնում են հետևյալ սահմանափակումների հաշվառմամբ.

1) արգելվում է թեկնածուին, ընտրություններին մասնակցող կուսակցությանը, կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված ուղղակի կամ անուղղակի կոչերը պաշտոնեական լիազորություններն իրականացնելիս կամ պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը՝ ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար.

2) արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցների, տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների:

4. Եթե իրականացվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակում ընդգրկված՝ սույն հոդվածի 3-րդ մասում նշված թեկնածուի այլ գործունեության լուսաբանում, ապա վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող զանգվածային լրատվության միջոցն այն հաշվի է առնում մյուս

թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների գործունեությունը լուսաբանելիս՝ սույն օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված լուսաբանման հավասարության ոչ խտրական սկզբունքը պահպանելու համար:»:

Դիմումատուն նշել է, որ թեկնածու Արմեն Հակոբջանյանի կողմից ժամանակ առ ժամանակ որպես Սիսիանի համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար հանդես գալիս խախտում է Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածը:

Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թեկնածու Արմեն Հակոբջանյանն իր կողմից իրականացվող նախընտրական հանդիպումներում, պետք է զերծ մնա որպես համայնքի ղեկավարի պաշտոնակատար ներկայանալուց, թեև սույն վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովն իրազեկվել է, որ Արմեն Հակոբջանյանը գտնվում է արձակուրդում:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի օգտագործման կարգը սահմանված է Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածով, որի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝

«1. Թեկնածուները, ընտրություններին մասնակցող կուսակցություններն իրավունք ունեն անարգել տարածելու քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր:

2. Հանրության համար տեսանելի քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են փակցվել միայն՝

1) հատուկ այդ նպատակով առանձնացված տեղերում, վճարովի գովազդային վահանակներում, ընտրական շտաբների վրա.

2) ֆիզիկական անձանց համաձայնությամբ՝ նրանց պատկանող կամ նրանց տիրապետման ներքո գտնվող շենքերի, շինությունների (բացառությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, հանրակրթական դպրոցների, բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի, հասարակական սննդի կամ առևտրի օբյեկտների), տրանսպորտային միջոցների (բացառությամբ հասարակական տրանսպորտի և տաքսու) վրա կամ դրանց ներսում: Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի վրա քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր կարող են տեղադրվել միայն ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսացող տարածքում (այդ թվում՝ պատշգամբներում, պատուհանների վրա և այլն) կամ արտաքին պատերին տեղադրված վճարովի գովազդային վահանակների վրա: (…)»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները քարոզչական պաստառի, քարոզչական տպագիր և այլ նյութերի տեղադրման դեպքում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ապահովում են ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ:»:

Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 9-րդ մասի առաջին պարբերության համաձայն՝ «Սույն հոդվածի դրույթների խախտմամբ փակցված քարոզչական պաստառը, քարոզչական տպագիր և այլ նյութերը հանում է համայնքի ղեկավարը, անհրաժեշտության դեպքում՝ ոստիկանության աջակցությամբ: Սույն գործառույթը համայնքի ղեկավարի համար պատվիրակված լիազորություն է:»:

Դիմումում նշվում է. «Քաղաքացու որոշում կուսակցությունը չի տիրապետում տեղեկատվության առ այն, թե արդյոք Սիսիանի համայնքապետարանի կողմից թիվ 34 ԸԸՀ–ին ներկայացվել են պահանջվող տեղեկությունները, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու նպատակով թիվ 34 ԸԸՀ-ը ինչպիսի միջոցառումներ է ձեռնարկել»: Թիվ 34 ընտրտարածքային ընտրական հանձնաժողովը փաստում է, որ 2023 թվականի մարտի 13-ին թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Սիսիանի համայնքապետարանից գրությամբ պահանջել է տեղեկություններ առ այն, թե ո՞վ է հանդիսանում Սիսիան համայնքին սեփականության իրավունքով պատկանող համայնքային գույք հանդիսացող էլեկտրական հոսանքի հենասյուների վրա Սիսիան քաղաքի Շիրակ, Խանջյան, Մինասյան, Բռնակոթ բնակավայրի Վահան Խորենի փողոցներում տեղակայված գովազդային վահանակների տնօրինողը, որի պատասխանն ստացել է 2023 թվականի մարտի 15-ին և որին կից ներկայացվել են նաև Սիսիանի համայնքապետարանի կողմից 2023 թվականի մարտի 26-ին ընտրություններին մասնակցող կուսակցություններին ուղարկված ծանուցումները: Գրությանը կից ներկայացված ծանուցումներից հնարավոր է փաստել, որ Քաղաքացու որոշում կուսակցությանն ուղարկված ծանուցումն ստացվել է կուսակցության կողմից, որի մասին ծանուցման թերթիկի վրա կա համապատասխան գրառում: Բացի այդ, թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2023 թվականի մարտի 15-ին գրություն է ուղարկել Սիսիանի համայնքապետարան՝ խնդրանքով, որ վերջինս կատարի շրջայց և հանի Ընտրական օրենսգրքի խախտմամբ փակցված պաստառները:

Ինչ վերաբերում է դիմումատուի դիրքորոշմանն առ այն, որ «թիվ 34 ԸԸՀ ՀՀ իրավապահ մարմիններին ներկայացրել է արդյոք հաղորդում թիվ 34 ԸԸՀ-ի 15.03.2023 թվականի 10-Ա որոշումով հաստատված ՀՀ Ընտրական օրենսգրքի 20.1 հոդվածով սահմանված խախտումները կատարած անձանց և առերևույթ հանցագործության հատկանիշներով արարք կատարելու մեջ կասկածվող պաշտոնատար անձանց հայտնաբերելու համար», ապա թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ ներկայացվածը դիմումատուի դիրքորոշումն է և դիմումատուն, ըստ անհրաժեշտության, կարող է դիմել իրավապահ մարմիններին:

Դիմումում նկարագրված հանգամանքի կապակցությամբ, որում նշվում է՝ «առնվազն մինչև սույն դիմումի ներկայացման պահը Տեղեկատվություն քարոզչական պաստառներ փակցնելու 10 հազար և ավել ընտրողներ ունեցող համայնքներում անվճար տեղեր հատկացնելու վերաբերյալ որոշման մեջ առկա սխալներով պայմանավորված թերություններն ու խախտումները վերացված չեն կամ վերացված են մասամբ» թիվ 34

ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ, ինչպես և նշված է դիմումում, Քաղաքացու որոշում կուսակցության նախընտրական շտաբը բանավոր տեղեկացրել է թիվ 34 ԸԸՀ նախագահին քարոզչական պաստառներին առնչվող խախտումների մասին: Թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասով՝ համաձայն որի. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Նման դեպքերում առանձին ակտի տեսքով որոշումների ընդունումը պարտադիր չէ:», մինչև սույն դիմումը ստանալը դիմել է Սիսիանի համայնքապետարան՝ դիմումատուի կողմից բարձրացված հարցերին լուծում տալու համար՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով: Սիսիանի համայնքապետարանը ձեռնարկել է համապատասխան միջոցներ, այդ թվում ուղարկելով պատասխան գրություններ և 2023 թվականի մարտի 17-ին կայացնելով «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2023 թվականի փետրվարի 09-ի թիվ 108-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 205-Ա որոշումը:

Ինչ վերաբերում է էլեկտրական հոսանքի հենասյուների վրա տեղակայված գովազդային վահանակներում փակցված պաստառներին, ապա թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ 15.03.2023թ. իրականացված վարչական վարույթի շրջանակներում կայացված որոշման պահանջը՝ խախտման վերացման ուղղությամբ, արդեն իսկ կատարվել է և խախտումը փաստացի վերացվել է, ինչ մասին վկայում են թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի շրջայցի արդյունքները:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 19-23-րդ, 47-49-րդ հոդվածներով՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Քաղաքացու որոշում կուսակցության լիազոր ներկայացուցիչ Վ. Բալյանի 17.03.2023թ. դիմումով ներկայացված հանգամանքներում Ընտրական օրենսգրքի պահանջների խախտում առկա չէ :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ԹԻՎ 34 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա . ՍՏԵՓԱՆՅԱՆ**